ՄԱՐԻԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ*

ԵՊՀ պատմության ֆակուլտետի ասպիրանտ

mariam-hakobyan-1010@mail.ru

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Բանալի բառեր՝ Գևորգ V-րդ կաթողիկոս, Բուլղարիայի հայոց թեմ, անցումային շրջան, Կ. Պոլսի պատրիարքություն, Գարեգին եպիսկոպոս Խաչատրյան, Գերագույն հոգևոր խորհուրդ, Ազգային սահմանադրություն:

Ներածություն

1920-ական թվականներից սկսած Բուլղարիայի հայոց թեմի իրավավարչական փոփոխման գործընթացը պայմանավորված էր հիմնականում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության վարած հակաեկեղեցական քաղաքականությամբ և մասամբ՝ Հայոց ցեղասպանության հետևանքով Սփյուռքում հայության թվաքանակի զգալի աճից հետո Հայոց եկեղեցու կողմից ձևավորվող նոր գործելաոճով:

Պատերազմի տարիներին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հիմնականում զբաղված էր ցեղասպանությունից փրկված վտարանդի հայության տեղավորմամբ, նրանց կեցությունը հոգալով, իսկ Կ.Պոլսի պատրիարքությանը՝ որպես Ամենայն Հայոց Հայրապետության փոխանորդի, հանձնել էր սփյուռքյան թեմերի (Բուլղարիա, Ռումինիա, Թրակիա, Հունաստան, Եգիպտոս, Եվրոպա, Ամերիկա) կառավարումը:

Բուլղարիայի հայոց թեմի անցումային շրջանը

1916 թ. Օսմանյան կայսրությունը Հայոց հոգևոր կյանքը և նվիրապետական աթոռների՝ դարերով արմատացած իրավունքները քայքայելու համար նոր կանոնադրություն է ընդունում, որի համաձայն Հայաստանյայց առաքելական եկեղեցու երեք նվիրապետական աթոռները՝ Կ. Պոլսի, Երուսաղեմի հայոց պատրիարքությունները, Սսի կաթողիկոսությունը միավորվում էին և

* *Հոդվածը ներկայացվել է 24.12.19, գրախոսվել է 13.02.20, ընդունվել է տպագրության 14.08.20:*

դադարում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչական կառուցվածքի բաղկացուցիչ մաս լինելուց և չէին ճանաչելու Ամենայն Հայոց կաթողիկոսության գերիշխանությունը: Թեև պատերազմում Օսմանյան կայսրության պարտության հետևանքով այդ ծրագիրը դադարեցվեց, սակայն նրանց հաջորդող ուժի՝ քեմալական կառավարության կողմից հայոց հոգևոր կյանքի միասնականության հիմքերը թուլացնելու, հատկապես՝ Կ. Պոլսի պատրիարքության իրավազրկման քաղաքականությունը շարունակվեց նաև հետագայում[1]:

Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսը այս իրադարձությունների կրկնվելը կանխելու համար սփյուռքյան թեմերի հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անմիջական վերահսկողությունը վերականգնելու ծրագրեր մշակեց:

Այս առումով առաջին ձեռնարկը եղավ 1920 թ. դեկտեմբերի 25-ին կաթողիկոսական կոնդակը, որի համաձայն, սփյուռքյան թեմերի կառավարման անմիջական վերահսկողությունը, թեմերի համար առանձին սահմանադրություն հաստատելուց հետո, վարելու էր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը[2]:

Հաջորդ քայլը եղավ Ամենայն հայոց կաթողիկոսի 1925 թ. թիվ 79 կոնդակով Եվրոպայի հայոց թեմի կազմավորումը: Ակնհայտ էր, որ կաթողիկոսական այս ձեռնարկների նպատակը մի կողմից Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրավունքների վերականգնումն ու Սփյուռքում հայության ուծացման վտանգը կանխելն էր, մյուս կողմից միտված էր սահմանափակել Կ. Պոլսի պատրիարքության՝ սփյուռքյան թեմերի նկատմամբ ունեցած իրավունքները, քանի որ վտանգ կար, որ Թուրքիան կարող էր այդ թեմերում քայքայիչ գործունեություն ծավալել: «Ապագա» թերթը անդրադառնալով Եվրոպայի նորաստեղծ թեմին, նշում էր, որ վերջինիս և Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքարանների հետ հարաբերություններում սահմանափակումները պայմանավորված են քաղաքական անկայուն իրավիճակով, և Կ. Պոլսի պատրիարքարանը չէր կարողանում պատշաճ ուշադրություն ցուցաբերել սփյուռքյան թեմերին և նրանցից յուրաքանչյուրը թեմական կյանքը վարում էր սեփական հայեցողությամբ[3]:

Բուլղարիայի հայոց թեմի՝ Մայր Աթոռի իրավասության տակ անցնելը բավական երկար ընթացք ունեցավ, քանի որ թե՛ աշխարհագրորեն, թե՛ թեմական կառավարման համակարգի նմանություններով բուլղարահայոց թեմը սերտորեն կապված էր Կ. Պոլսի պատրիարքարանին: Բուլղարահայոց

[1] Հայաստանի ազգային արխիվ, (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 2, գ. 2033, թ. 25:
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 559, թ. 6 շրջ.: Տե՛ս նաև նույն տեղում, գ. 416, թ. 1:
[3] Տե՛ս Ապագայ 1925, հուլիսի 4:

թեմը առաջնորդվում էր 1863 թ. հաստատված արևմտահայերի կրոնահամայնքային կյանքի, Հայ առաքելական եկեղեցու դավանանքով ու ավանդույթներով ամբողջացված Ազգային սահմանադրությամբ[4], ուստի հասկանալի է, թե ինչու թեմական միջավայրի կողմից Մայր Աթոռին անմիջականորեն ենթարկվելու որոշումը միանշանակ չընդունվեց:

1924 թ. օգոստոսին՝ Ֆիլիպեում կայանում է պատգամավորական համագումար, որի ընթացքում կազմվում է թեմական խորհուրդ: Այն լիազորվում է զբաղվել բուլղարահայ համայնքի ազգային գործերով: Համագումարի անդամները առաջնորդվելով Եվրոպայի հայոց թեմի 65-րդ, և Բուլղարիայի հայոց թեմի 25-րդ կանոնադրությունների դրույթներով[5] որոշում են, որ այսուհետև խորհուրդը խզում է իր անմիջական հարաբերությունը Կ. Պոլսի պատրիարքության հետ և ցանկություն հայտնում գործելու նորակազմ Եվրոպայի հայոց թեմի հոգևոր իշխանության ներքո: Թեմական խորհուրդը միաժամանակ հորդորում է Գերագույն հոգևոր խորհրդին, որ Ամենայն հայոց կաթողիկոսն այդ ենթակայությունը հաստատող կոնդակ հրապարակի[6]:

1925 թ. օգոստոսին Եվրոպայի թեմի նորանշանակ կաթողիկոսական պատվիրակ Գրիգորիս Պալաքյանը այդ մասին տեղեկացնում է Ամենայն հայոց կաթողիկոսին: Նա նշում էր, որ Սոֆիայի և Բուլղարիայի քաղաքների թաղական խորհուրդների կողմից Բուլղարիայի թեմը նորակազմ թեմում ընդգրկելու համար ինքը բազմաթիվ դիմումներ էր ստացել, բայց դրանց չէր արձագանքել: Սակայն թեմական խորհրդի կողմից ուղարկված վերջին նամակում շեշտված էր, որ այն բուլղարահայության նվիրական ցանկությունն է, հետևաբար, անտեսել չէր կարելի: Գերագույն հոգևոր խորհուրդը պատասխան նամակում հստակեցնում է, որ դեռևս 1920 թ. դեկտեմբերի 25-ի Հայրապետական կոնդակով Օսմանյան կայսրության սահմանակից և դրանից դուրս գտնվող բոլոր թեմերը հոգևոր և վարչական առումով արդեն իսկ անցել էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անմիջական հսկողության ներքո, իսկ առանձին կաթողիկոսական կոնդակ շնորհել հնարավոր չէր, քանի որ Սոֆիայի պատգամավորական ժողովի և նրա ընդունած որոշումների պատճենը Մայր Աթոռ Ս. Էջմիածին չէր հասել: Ինչ վերաբերում էր թեմը Եվրոպայի թեմում ընդգրկելուն, չնայած Գ. Պալաքյանի բոլոր պնդումներին, այնուամենայնիվ, այդ առաջարկը մերժվում է, և Գերագույն հոգևոր խորհրդի հրամանով այն հին ու

[4] Քրիստոնյա Հայաստան Հանրագիտարան 2002, 19:
[5] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5087, թ. 15:
[6] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5080, թ. 1 և շրջ.:

նոր Հունաստանի, Ռումինիայի թեմերի նման շարունակելու էր գործել առանձին առաջնորդարանով[7]:

Բուլղարիայի հայոց թեմը Կ.Պոլսի իրավասության ներքո թողնելու համար ամենից շատ պայքարում էր Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանը: Նա Գևորգ Ե-ին հասցեագրված մի շարք նամակներում բացատրում էր, թե Կ. Պոլսի պատրիարքարանի հետ հարաբերությունների դադարեցումը ինչ բացասական հետևանքների կարող էր հանգեցնել: 1925 թ. Գևորգ արքեպիսկոպոսը ողջունելով Ամենայն հայոց կաթողիկոսի՝ աշխարհասփյուռ հայության հետ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կապերը զորեղացնելու ջանքերը, միաժամանակ կարծում էր, որ վարչական առումով Բուլղարիան և Եգիպտոսը[8] պետք է մնան Կ. Պոլսի պատրիարքության հովանու ներքո, քանի որ այդ թեմերում ծագող դժգոհությունների, խնդիրների դեպքում Ս. Էջմիածնին տեղեկացնելը կարող էր երկար ժամանակ պահանջել[9]: Գերագույն հոգևոր խորհրդի պնդմամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ անմիջական կապի վերականգման հիմնական նպատակը եվրոպահայության ուծացման գործընթացը կանխելն էր, իսկ ինչ վերաբերում էր հաղորդակցության դժվարություններին և դրանց սահմանափակումներին, խորհրդի կարծիքով այդ խնդիրները պատերազմից հետո արդեն լուծվել էին[10]:

Կ. Պոլսի պատրիարքական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոսը մեկ այլ նամակում հավաստում էր, որ հայրապետական հրամաններին և դրա կատարմանը հետևելը իր համար պարտականություն լինելով հանդերձ, գործնականում դժվար կլիներ իրականացնել: Վերջինիս պնդմամբ, բուլղարական կառավարությունը ևս կողմնակից էր թեմի նախկին վարչաձևի պահպանմանը[11]: Ավելի ուշ՝ 1927 թ., նա փաստում է, որ «Հոգևոր գէրագոյն սրբագումար խորհուրդը առանց ընթացք տալու մէր այս դիմումին, որոշէց Պուլկարիոյ թէմն ալ վարչականապէս կապուած պահէլ Մայր Աթոռոյ...»[12]: Քանի որ Կ. Պոլսից Բուլղարիայի հայոց թեմի անջատումը կատարվեց շատ կտրուկ, շուտով թեմը եկեղեցական-վարչական, ծիսական-արարողական կատարման

[7] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 5080, թ. 2–4:
[8] ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 3934, թ. 5:
[9] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 3934, թ. 6:
[10] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 3934, թ. 6:
[11] ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 5085, թ. 1–3:
[12] ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 5087, թ. 16:

տեսանկյունից անորոշ վիճակում հայտնվեց: «Պուլկարիոյ հայոց թէմը առանձնացած ու մէկուսացած է, և եկէղեցականաց կանոնական պարտաւորութեանց, հնազանդ սովորութեանց, կուսակրոն և ամուսնաւոր եկիղէցականաց կոչման, ծիսական կարգաւորութեանց, խորհրդոյ կատարման, ամուսնական խնդրոց, ծխական դրութեան և այլն և այլնի մասին աւանդական և գրաւոր տիղեկութիւններ ու բացատրութիւնէր կը պակսին, ...և առանց որոնց չէ կարէլի մէր եկէղեցւոյ հարազատութիւնը և ինքնորոյնութիւնը պահպանէլ...»,- նշում էին թեմական խորհրդի անդամները Գևորգ Ե կաթողիկոսին գրած նամակում[13]: Ամենայն հայոց կաթողիկոսը եկեղեցական ծեսերի, արարողությունների կատարման համար նախատեսված գրքերը Կ. Պոլսի կամ Երուսաղեմի պատրիարքարանից ձեռք չբերելու դեպքում խոստանում էր անձամբ ուղարկել, ինչ վերաբերում էր վարչական-եկեղեցական կանոնադրությանը (առաջնորդի, թեմական և թաղական խորհուրդների, ստորադաս եկեղեցական պաշտոնյաների ընտրության, նրանց իրավունքների և պարտականությունների սահմանմանը), նշվում էր, որ Մայր Աթոռում արդեն մշակվում է ընդհանուր կանոնադրություն՝ բոլոր թեմերի համար, սակայն դրա հաստատումը պետք է կատարվեր միայն բոլոր թեմերից իրենց միջավայրի առանձնահատուկ դիտողությունները ստանալուց հետո, հետևաբար, ժամանակավոր գործադրության համար տրամադրվում է թեմական և ծխական կանոնադրություն, որը կիրառելի էր նաև Ամերիկայի Կենտրոնական վարչությունում[14]:

Բուլղարիայի հայոց թեմի նոր վարչաձևի հաստատումը իսկապես Կ. Պոլսի պատրիարքության դեմ ուղղված չէր և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը քանիցս դա ապացուցեց: 1926 թ. նոյեմբերի 3-ի կաթողիկոսական կոնդակի համաձայն, Բուլղարիայի թեմի հոգևոր-վարչական անկայուն վիճակի կարգավորման, առաջնորդական ընտրություններ կազմակերպելու համար բուլղարահայ թեմի կաթողիկոսական պատվիրակի պաշտոնը վստահվում է Տրապիզոնի Սուրբ Լուսավորիչ եկեղեցու քարոզիչ Գարեգին եպիսկոպոս Խաչատրյանին[15]: 1927 թ. Գևորգ արքեպիսկոպոսը Ամենայն հայոց կաթողիկոսին գրած նամակում տեղեկացնում է Գարեգին եպիսկ. Խաչատրյանի՝ մամուլում կարդացած մտահոգիչ լուրերի մասին, որոնց համաձայն, կաթողիկոսը, իբր արդեն սկսել էր անմիջական հարաբերությունները բուլղարահայ թե-

[13] ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 5096, թ. 7:
[14] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 5096, թ. 8:
[15] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 5085, թ. 5–6:

մի նորանշանակ առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանի հետ: Կ. Պոլսի կենտրոնական վարչության խառն ժողովը այդ լուրերը ստանալուց հետո գումարվում և որոշում է դիմել Ամենայն հայոց կաթողիկոսին, խնդրելով պատասխանել, թե այս պարագայում ո՞րն էր լինելու Գարեգին սրբազանի դերը և ի՞նչ գործառույթ է նա իրականացնելու այնտեղ[16]: Գերագույն հոգևոր խորհուրդը Գևորգ արք. Արսլանյանին հասցեագրված պատասխան նամակում ևս մեկ անգամ բացատրում է, որ սփյուռքյան թեմերի շրջանում իրականացված վարչական փոփոխությունը Կ. Պոլսի պատրիարքության դերն ու նշանակությունը նսեմացնելու նպատակ չի հետապնդում, այլ պայմանավորված է տվյալ ժամանահատվածում ձևավորված քաղաքական պայմանով: Ինչ վերաբերում է Գարեգին եպիսկոպոս Խաչատրյանի՝ Բուլղարիա մեկնելուն, ապա խորհուրդը նշում է, որ նա, Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակի համաձայն, հստակ առաջադրանքներ է ստացել, որոնք պետք է կատարեր, իսկ մամուլում տարածված լուրերը իրականությանը չեն համապատասխանում[17]: Ցավոք, Բուլղարիայի հյուպատոսարանի կողմից վիզայի չտրամադրման և այլ խնդիրներով պայմանավորված Գարեգին եպիսկոսպոս Խաչատրյանին այդպես էլ չի հաջողվում մեկնել Բուլղարիա, և 1927 թ. օգոստոսի 27-ին Գևորգ Ե կաթողիկոսին գրած նամակում նա խնդրում է ազատել իրեն կաթողիկոսական պատվիրակի պաշտոնից[18]:

Արդեն 1934 թ. բուլղարահայ համայնքներում ծագած երկպառակությունները վերացնելու համար այստեղ է ժամանում Եվրոպայի կաթողիկոսական պատվիրակ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը: Նրա այցը արդեն իսկ վկայում էր, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ Բուլղարիայի թեմի հարաբերությունները կառուցվելու էին Եվրոպայի թեմի միջոցով: Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից այդ կապի ամրապնդման համար ուղղված քայլերը նույնպես չուշացան: Բուլղարիայի թեմական խորհրդի փոխանորդ Գրիգոր ծայրագույն վարդապետ Կարապետյանը (Գուսան վարդապետ) Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի հետ հանդիպման ընթացքում առաջարկեց Սերբիան առանձնացնել Եվրոպայի թեմից և կցել բուլղարահայ թեմին: Վերջինիս կարծիքով, քանի որ Բուլղարիան սահմանակից է Բելգրադին և Սկոպյեին, ապա հայության շրջանում հոգևոր ծառայությունների կազմակերպումը ավելի

[16] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 5087, թ. 18:
[17] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 5087, թ. 18:
[18] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 5087, թ. 66:

դյուրին կլիներ[19]: Նույն թվականի ապրիլի 12-ին Գերագույն հոգևոր խորհուրդը հայտնում է Խորեն կաթողիկոսի՝ Սերբիայի հայոց թեմի հոգևոր և վարչական իրավասությունը Բուլղարիայի հայոց թեմին հանձնելու որոշման մասին[20]: Բելգրադ, Սկոպյե, Նիշ քաղաքներում ապրող փոքրաթիվ հայությունը մեծ ոգևորությամբ է ընդունում այս լուրը: Թեմի առաջնորդն այդ շրջանում Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանն էր, որը հիվանդության պատճառով չի կարողանում այցելել Սերբիա[21]:

Միայն 1936 թ. Գրիգոր ծայրագույն վարդապետը առաջին այցելությունն է կատարում: Վերջինիս վկայությամբ, Բելգրադի Բառնաբառ պատրիարքի կարգադրությամբ սերբ հոգևորականները կազմակերպում էին տեղի հայության հոգևոր արարողությունները, որը մի շարք խնդիրների մասին էր վկայում: Դրանցից թերևս ամենաակներևը այն էր, որ այստեղ հայ հոգևորականներ չկային, իսկ սերբերը լինելով օրթոդոքս, դեմ էին, որ հայերը հոգևորականներ ունենային՝ գտնելով, որ «սերբ քահանաները կարող են բավարարել նրանց հոգևոր պետքերը»: Այս պատճառով հարսանեկան, մկրտության և այլ արարողությունները կատարվում էր սերբ հոգևորականների միջոցով[22]:

Եզրակացություններ

Փաստորեն, Բուլղարիայի հայոց թեմի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անմիջական կապի վերականգնման արդյունքում Սերբիայի հոգևոր հովվությանը իր իրավասությունները ամրապնդելու, իսկ տեղի հայությանը՝ ազգային կյանքի կազմակերպման հնարավորություն ընձեռվեց:

Անշուշտ, Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսի կողմից սփյուռքի թեմերի անմիջական վերահսկողությունը Հայոց հոգևոր կենտրոնին վստահելը առաջին հերթին ազգապահպան նշանակություն ուներ, քանի որ դրանով կասեցվեց Կ. Պոլսի պատրիարքության միջոցով թուրքական իշխանությունից սպառնացող վտանգը: Այս որոշումը բուլղարահայ թեմում ազգային կյանքի կազմակերպման գործում դրական ազդակ ունենալով հանդերձ, ներքին կազմակերպական որոշակի խնդիրներ առաջացրեց: Կ. Պոլսից Մայր Աթոռ Ս. Էջմիածին անցումը հապճեպորեն կատարվեց, առանց թեմում գործող իրա-

[19] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5118, թ. 5 և շրջ.:
[20] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5118, թ. 6:
[21] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5123, թ. 3:
[22] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5398, թ. 33:

վավարչական կառույցների համար համապատասխան նորմերի մշակման, ինչն էլ ավելի խորացրեց թեմում տիրող անկայուն վիճակը: Բուլղարիայի հայոց թեմի նոր վարչաձևը՝ փոփոխման ընթացքում առաջացած բարդություններով հանդերձ, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ամրապնդման, հայապահպանության կազմակերպման գործուն օրինակ հանդիսացավ:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Ապագայ», Փարիզ, 4 հուլիսի 1925, թիւ 54, էջ 1:

Հայաստանի ազգային արխիվ, (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 57, ց. 2, գ. 2033, թ. 25:

ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 416, թ. 1, գ. 559, թ. 6 շրջ.:

ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 3934, թ. 5, 6, գ. 5080, թ. 1 և շրջ., 2–4, գ. 5085, թ. 1–3, գ. 5087, թ. 15, 16, 18, 66, գ. 5118, թ. 5 և շրջ., 6, գ. 5123, թ. 3, գ. 5398, թ. 33:

Քրիստոնյա Հայաստան Հանրագիտարան 2002, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխավոր հրատ., 1076 էջ:

ВОПРОС ПОДЧИНЕННОСТИ БОЛГАРСКОЙ АРМЯНСКОЙ ЕПАРХИИ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ

АКОПЯН М.

Резюме

Ключевые слова: Католикос Геворк V, Болгарская армянская епархия, переходный период, Константинопольское патриаршество, епископ Гарегин Хачатрян, Верховный духовный совет, Национальная конституция.

Католикос всех армян Геворк V имел опасения, что Константинопольское патриаршество могло стать оружием в руках турецких властей. Исходя из этого он принял решение о передаче управления зарубежными армянскими епархиями в непосредственное ведомство Первопрестольного Св. Эчмиадзина, что было предусмотрено его Кондаком от 25 декабря 1920 г. Так как Болгарская армянская епархия была тесно связана с Константинопольским патриаршеством, то этот процесс был сопряжен для нее с определенными сложностями, но, при этом, как и все зарубежные

армянские епархии, Болгарская также осталась верна постулатам армяно-григорианской церкви.

ON THE SUBORDINATION OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH IN BULGARIA

HAKOBYAN M.

Summary

Key words: Catholicos Gevorg E, Bulgarian-Armenian Diocese, transition period, Patriarchate of Constantinople, Bishop Garegin Khachatryan, Supreme Spiritual Council, National Constitution.

The Catholicos of All Armenians Gevorg V, had fears that the Constantinople patriarchate could become a weapon in the hands of the Turkish authorities.

Due to this, he decided to hand the control of the foreign Armenian dioceses to the direct authority of the Mother See of Holy Etchmiadzin, which was stipulated by his Kondak issued on December 25, 1920. Since the Bulgarian - Armenian diocese was closely connected with the Patriarchate of Constantinople, this process encountered certain difficulties. However, like all foreign Armenian dioceses, the Bulgarian diocese also remained faithful to the postulates of the Armenian-Gregorian church.